ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՖՐԵԴԵՐԻԿՈ ՄԱՅՈՐԻՆ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսից տեղեկացված լինելով Կիպրոսում Սբ. Մակար Հայկական պատմական վանք-եկեղեցին հյուրանոցի վերածելու թուրքական իշխանությունների որոշման մասին, փետրվարի 12-ին նամակ հղեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Ֆրեդերիկո Մայորին: Նամակում Վեհափառ Հայրապետն իր ընդվզումն է արտահայտում այդ որոշման դեմ և խնդրում պրն. Մայորի միջամտությունը, որպեսզի արգելվի ծրագրի իրականացումը:

Սբ. Մակար Հայկական եկեղեցին Կիպրոսի ամենահին եկեղեցիներից է՝ կառուցված 4-րդ դարում: Այն սրբավայր է եղել հազարավոր ուխտագնացների համար: Եկեղեցու տարածքում են գտնվում սրբերի շատ գերեզմաններ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ